

Հաստատված է՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2018թ. հունիսի 22-ի նիստում

Խորհրդի նախագահ՝ ռեկտորի պարտականություններ կատարող՝

Ե.Ս. Սերոբյան



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

2018թ

1.Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կարգով սահմանվում է «Շիրակի Մ.Նալբանդյանի պետական համալսարան» հիմնադրամի քոլեջում (այսուհետ քոլեջ) առաջացած մանկավարժի թափուր աշխատատեղերի համալրման մրցույթի (այսուհետ մրցույթ) կազմակերպման և անցկացման ընթացակարգը, ինչպես նաև մրցույթի ենթակա աշխատատեղերի ցանկը:
- 1.2. Թափուր աշխատատեղերի համալրման մրցույթը մասնակիցների համար երաշխավորում է իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան մասնակցության հավասար հնարավորություններ:
- 1.3. Թափուր աշխատատեղ է համարվում սույն կարգի 1.5-րդ կետով սահմանված մրցույթի ենթակա չգրադեցված աշխատատեղերը:
- 1.4. Քոլեջում ժամանակավորապես թափուր աշխատատեղ առաջանալու դեպքում մրցույթ չի անցկացվում:
- 1.5. Մրցույթի ենթակա է ամբիոնի վարիչների պաշտոնների թափուր աշխատատեղերը
- 1.6. Մրցույթի մասնակցելու իրավունք ունեն Քոլեջի տվյալ աշխատատեղին պաշտոնի հրահանգով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին (այլ լեզուներ) տիրապետող, 18 տարին լրացած անձիք:
- 1.7 Թափուր աշխատատեղերը գրադեցնելու համար մրցույթն անցկացվում է տնօրենի կողմից ստեղծվող մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով):
- 1.8.Մրցույթն անցկացվում է թեստավորման և/կամ հարցազրույցի միջոցով: